ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-19/12-1

ք.Երևան «24» «10» 2019թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայությանն կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և «Սուֆետ» ՍՊ ընկերությունը ի դեմս Վ. Չիլինգարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ «Կատարող»), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալ մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **շինարարության նկատմամբ տեխնիկական հսկողության** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետները ներկայացված են պայմանագրի N 1 Հավելվածում:

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ընդհանուր գինը կազմում է 651000 (վեց հարյուր հիսունմեկ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-Ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված են 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում,

Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն	«Սուֆետ» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց-63	ՀՀ Տավուշի մարզ, գ. Ջուջևան,
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	3 փող., 4. նրբ, 4 տուն
Հ/Հ 900011029148	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02204739	Հ/Հ 1570014998450100
ՔԿ ծառայություն՝	ՀՎՀՀ 07404587
Ա.Ղազարյան	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ.

Հավելված N 1
«24» «10» 2019 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-19/12-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայությունների								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման	
							հասցեն	ժամկետը
1	71351540/1	ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ արտաքին և ներքին ջրահեռացման ցանցերի վերակառուցման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ	ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ արտաքին և ներքին ջրահեռացման ցանցերի վերակառուցման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողությունն իրականացնել ըստ հավելված 1-ի ծավալների:	դրամ	207000	1	ք. Երևան, Նուբարաշենի խճուղի 2	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 25.12.2019թ.
3	71351540/3	ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿՀ ներքին ջրամատակարարման, արտաքին և ներքին ջրահեռացման համակարգերի ցանցերի վերանորոգում, սանհանգույցների և բաղնիքի, վերանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ	ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿՀ ներքին ջրամատակարարման, արտաքին և ներքին ջրահեռացման համակարգերի ցանցերի վերանորոգում, սանհանգույց ների և բաղնիքի, աշխատանքների տեխնիկական հսկողությունն իրականացնել ըստ հավելված 2-ի ծավալների:	դրամ	291000	1	Կոտայքի մարզ, ք.Աբովյան 2-րդ արդյունաբերական թաղ, թիվ 30/1	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 25.12.2019թ.
4	71351540/4	ՀՀ ԱՆ «Հրազդան» ՔԿՀ արտաքին կոյուղագծի վերանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ	ՀՀ ԱՆ «Հրազդան» ՔԿՀ արտաքին կոյուղագծի վերանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողությունն իրականացնել ըստ հավելված 3-ի ծավալների:	դրամ	153000	1	Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Միկրոշրջան 45	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 25.12.2019թ.

Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետները սահմանվում է շինարարական աշխատանքների ավարտից հետո մեկ տարի ժամկետով

Ծավալաթերթ

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՆՈՒԲԱՐԱՇԵՆ» ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ

NN	Հիմնավորում	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը
1	2	3	4	5
		Արտաքին կոյուղու ցանց		
1	E27-33	Ասֆալտաբետոնե ծածկույթի քանդում 8սմ հաստությամբ	մ³	4,00
2	E27-31	Խճի շերտի քանդում	մ³	7,00
3	C310-5 տ.մ.կ29	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 5կմ	տն	60,00
4	E1-1551	3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատրով կողլիցք /514+91/մ3	մ³	30,00
5	E1-962	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	3,00
6	E1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով /91+16/մ3	մ³	2,50
7	E1-969	Բնահողի ետլիցք ձեռքով	մ³	17,00
8	E1-1635 E1-1646	Բնահողի հետ լիցք բուլդոզերով	մ³	90,00
9	E1-1185	Բնահողի տոփանում	մ³	107,00
10	E23-1	Ավազե ենթաշերտի պատրաստում խողովակի տակ / այդ թվում վրան/	մ³	36,00
11	1-218	Գույքային վահաններով խրամուղու պատերի ամրացում և քանդում	մ³ բնահող	10,00
12	E22-124	Պոլիէթիլենային ծալքավոր խողովակների տեղադրում Φ315x7.6մմ, փորձարկումով, սեղմիչ օղակներով	գմ	22,20
13	E22-122	Նույնը Φ225x5.4մմ,	գմ	12,30
14	E23-109	Ե/բետոնե հավաքովի էլեմենտներից կոյուղու կլոր դիտահորի պատրաստում Φ 1,0մ / 3 հատ /	մ³	4,20
15	7-1	,,Ա,, Դիտահորի համար նոր ե/բ կափարիչի տեղադրում /գործող դիտահոր/	հատ	1,00
16	E8-27	Դիտահորի ջրամեկուսացում 2 շերտ բիտումի քսուկով	մ²	30,00
17	E22-71	Պողպատե պատյանի տեղադրում դիտահորերում D=300մմ, L=0.17մ, 71 հատ	գմ	0,58
18	Շուկա	Թուջե մտոց	հատ	3,00
19	E23-	Միացում գործող ցանցին տրամագիծը կապ չունի	տեղ	6,00

	155			
20	E9-46	Հորի մետաղական աստիճանի տեղադրում	տն	0,11
21	E6-84	Դիտահորի ամրացման մետաղական մասեր	տն	0,28
22	E15-614	Մետաղական աստիճանների և ամրացնող դետալների յուղաներկում 2 շերտ	մ²	25,00
23	E27-42 E27-42-1	Խճի շերտի պատրաստում 20սմ հաստությամբ	մ²	310,00
24	E27-164-1 E27-165-1	Խոշորահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 5սմ հաստությամբ	մ²	370,00
25	E27-164-2 E27 165-2	Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 3սմ հաստությամբ	մ²	370,00
26	27-36 27-78	Բետոնե եզրաքարերի քանդում և վերատեղադրում բետոնե հիմքով	գմ	9,50
Կենտրոնական մասնաշենքի ներքին կոյուղու ցանց				
1	E46-99	Առկա բետոնե հատակի քանդում 15սմ հաստությամբ 33.6մ2	մ³	5,04
2	E46-80	8սմ հաստությամբ միջնապատերի քանդում 15 մ2	մ³	1,20
3	P19-54	d=100 մմ թուջե խողովակաշարի ապամոնտաժում	գմ	9,00
4	C310-5 տ.մ.կ2 9	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 5կմ	տն	12,00
5	E11-11	B-15 դասի բետոնից բետոնե հատակի վերականգնում 33.6մ2, 15սմ հաստությամբ	մ³	5,04
6	E8-169	10սմ հաստությամբ պ/բ միջնորմների շարվածք ամրանավորումով և բետոնացմամբ	մ²	15,00
7	E8-59	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0,03
8	E1-1551	3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատրով կողլիցք	մ³	84,00
9	E1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	92,00
10	E1-968	Բնահողի ետլիցք ձեռքով	մ³	153,00
11	C310-5 տ.մ.կ2 9	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 5կմ	տն	41,40
12	E23-1	Ավազե ենթաշերտի պատրաստում խողովակի տակ / այդ թվում վրան/	մ³	23,00
13	E22-121	Պոլիէթիլենային խողովակների տեղադրում Φ150մմ, սեղմիչ օղակներով փորձարկումով	գմ	125,00
14	E22-119	Պոլիէթիլենայինծալքավոր խողովակների տեղադրում Φ150մմ, սեղմիչ օղակներով փորձարկումով	գմ	125,00
15	22-365	Պոլիէթիլենային ձևավոր մասեր /d=100-150/մմ անցում, թեքում, մաքրիչ	հատ	40,00
16	22-366	Նույնը եռաբաշխիչ /d=150x100x50/մմ	հատ	20,00

17	22-366	Նույնը /d=150x100x150/մմ	հատ	30,00
18	22-366	Ստուգիչ կանգնակի վրա d=150	հատ	10,00
19	E16-218	Միացում կոյուղագծին	տեղ	40,00
20	P11-126	Ներքին պատերի լավորակ g/ավազե սվաղ	մ²	22,00
21	P14-418	Պատերի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ²	22,00
N6 մասնաշենքի ներքին կոյուղու ցանց				
1	E16-34	Կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում պատերի վրա Φ150մմ /փորձարկումով/	գմ	13,00
2	22-365	Պոլիվինիքլորիդե ձևավոր մասերի տեղադրում d=150մմ	հատ	9,00
3	E22-362	Պողպատե ձեւվավոր մասերի տեղադրում D150մմ	տ	0,02
4	E22-71	Պողպատե պատյանի տեղադրում D=300մմ, L=0.6մ, 3 հատ	գմ	1,80
5	E1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	7,00
6	E1-968	Բնահողի ետլիցք ձեռքով	մ³	7,00
7	E23-1	Ավազե ենթաշերտի պատրաստում խողովակի տակ / այդ թվում վրան/	մ³	0,60
8	E16-218	Միացում կոյուղագծին	տեղ	11,00
9	E46-99	Բետոնե հատակի քանդում 15սմ հաստությամբ 1.5մ2	մ³	0,23
10	C310-5 տ.մ.կ29	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 5կմ	տն	0,42
11	E11-11	B-15 դասի բետոնից բետոնե հատակի վերականգնում 1.5մ2, 15սմ հաստությամբ	մ³	0,23
12	E46-53	Բետոնե պատերում անցքերի բացում d=300մմ	տեղ	2,00
13	E46-55	Ծածկերում անցքերի բացում d=250մմ	տեղ	4,00
14	P19-54	d=100 մմ կոյուղու թուջե խողովակաշարի ապամոնտաժում	գմ	4,00
Ճաշարանի մասնաշենքի ներքին կոյուղու ցանց				
1	P19-54	d=100 մմ կոյուղու թուջե խողովակաշարի ապամոնտաժում	գմ	5,00
2	E16-34	Կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում պատերի վրա Φ150մմ /փորձարկումով/	գմ	29,00
3	22-365	Պոլիվինիքլորիդե ձևավոր մասերի տեղադրում d=150մմ	հատ	13,00
4	E22-71	Պողպատե պատյանի տեղադրում D=300մմ, L=0.6մ, 2հատ	գմ	1,20
5	E1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	8,00
6	E1-968	Բնահողի ետլիցք ձեռքով	մ³	8,00

7	E23-1	Ավազե ենթաշերտի պատրաստում խողովակի տակ / այդ թվում վրան/	մ³	1,60
8	E16-218	Միացում կոյուղագծին	տեղ	9,00
9	E46-99	Բետոնե հատակի քանդում 15սմ հաստությամբ 2մ2	մ³	0,30
10	C310-5 տ.մ.կ29	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 5կմ	տն	0,60
11	E11-11	B-15 դասի բետոնից բետոնե հատակի վերականգնում 2մ2, 15սմ հաստությամբ	մ³	0,30
12	E46-53	Բետոնե պատերում անցքերի բացում d=300մմ	տեղ	2,00
13	E46-55	Ծածկերում անցքերի բացում d=250մմ	տեղ	4,00

Հավելված 2

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի ներքին ջրամատակարարման, արտաքին և ներքին ջրահեռացման համակարգի ցանցերի վերանորոգում, սանհանգույցների և բաղնիքի վերանորոգում

NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը
1	2	3	4
	Շինարարական աշխատանքներ		
	Պահակակետ		
	Քանդման աշխատանքներ		
1	Դռների բլոկների տեղահանում	մ²	1,47
2	Հատակի կերամիկական սալիկների քանդում	մ²	3,1
3	Ցեմենտավազե հարթաշերտի քանդում H=40մմ 3.1մ2	մ³	0,12
4	Հախճասալի քանդում պատերից	մ²	9,45
5	Ց/ավազե սվաղի քանդում պատերից	մ²	9,45
6	Առաստաղների և պատերի վրայից հին ներկի մաքրում	մ²	13,18
7	Պատերից գաջե սվաղի քանդում	մ²	10,08
8	Նույնը առաստաղից	մ²	3,1
9	Շին.աղբի հավաքում, պարկավորում, տեղափոխում 40մ հեռավորության վրա ձեռքով	տն	1,12
10	Շին աղբի բարձում ա/ինքնաթափ ձեռքով և տեղափոխում 15կմ հեռավորության վրա	տն	1,12
	Վերանորոգման աշխատանքներ		

1	Պատերի վնասված հատվածների մշակում բետոնակոնտակտ ամրացնող լուծույթով	մ²	0,88
2	Մետաղապլաստե եվրոպական պրոֆիլներով դռների տեղադրում,60մմ հաստ., հուսալի փականներով և բռնակներով, սպիտակ գույնի փեղկով	մ²	1,47
3	Ջրամեկուսացում հեղուկ ապակիով	մ²	3,1
4	40մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ²	3,1
5	Հատակների երեսպատում կերամիկական սալիկներով , ուղղանկյուն, հարթ, հաստությունը 6մմ , գույնը և չափերը ըստ պատվիրատուի պահանջի	մ²	3,1
6	Պատերի լավորակ ց/ավազե սվաղ ցանցով	մ²	19,53
7	Առաստաղների լավորակ ց/ավազե սվաղ ցանցով	մ²	3,1
8	Պատերի երեսպատում հախճասալով, ուղղանկյուն, հարթ, հաստությունը 6մմ, գույնը և չափերը՝ ըստ պատվիրատուի պահանջի	մ²	9,45
9	Պատերի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ²	19,53
10	Առաստաղի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ²	3,1
	Ջրամատակարարում և կոյուղի		
	Մեկուսարանի		
	Տաք, սառը կենցաղային և խմելու ջրամատակարարման ներքին ցանց		
	Ապամոնտաժման աշխատանքներ		
1	Ողողատյա ջրատար խողովակի ապամոնտաժում Φ15 , 20	գմ	18
2	Պոլիպրոպիլենե ջրատար խոռվակների ապամոնտաժում Φ15 - 20	գմ	30
3	Փականների և ջրընդունիչ ծորակների ապամոնտաժոնմ	հատ	16
	Մոնտաժման աշխատանքներ		
4	Պոլիպրոպիլենային խողովակի մոնտաժ սառը ջրի PR PN-10 Φ50մմ	գմ	8
5	Պոլիպրոպիլենային խողովակի մոնտաժ սառը ջրի PR PN-10 Φ32մմ	գմ	145
6	Պոլիպրոպիլենային խողովակի մոնտաժ PN-10, Φ25մմ	գմ	20
7	Պոլիպրոպիլենային խողովակի մոնտաժ PR PN-10, Φ20մմ	գմ	160
8	Պոլիպրոպիլենային ալյումինե շերտով խողովակի մոնտաժ ամրացումով տաք ջրի համար PR PN-10 Φ25մմ	գմ	25
9	Պոլիպրոպիլենային ալյումինե շերտով խողովակի մոնտաժ ամրացումով տաք ջրի համար PR PN-10 Φ20մմ	գմ	25
10	Լվացարանի ջրընդունիչ-ծորակ խառնիչ	հատ	8
11	Լվացարանի ջրընդունիչ-ծորակ	հատ	33
12	Ջրընդունիչ ծորակ խառնիչ ցնցուղով	հատ	14
13	Պոլիպրոպիլենե ֆիտիգներ	հատ	380
14	Ճկախողովակ Φ15մմ, L=500մմ	հատ	32

15	Կուտակային ջրատաքացուցիչ «Aristonե V=80լ	հատ	1
16	Փական d15	հատ	53
17	Փական d20	հատ	8
18	Փական d25	հատ	4
19	Փական d40	հատ	1
20	Միացում գործող ցանցին Φ25	տեղ	2
21	Միացում գործող ցանցին Φ50	տեղ	1
22	150x150մմ անցքի բացում պատերում	տեղ	50
23	նույնի՝ անցքի փակում	մ³	0,4
24	Ցանցի փորձարկում, լվացում և ախտահանում	մ	383
	Պահակակետ.		
	Սառը կենցաղային և խմելու ջրամատակարարման ներքին ցանց		
	Ապամոնտաժման աշխատանքներ	-	-
1	Պողպատյա ջրատար խողովակի ապամոնտաժում Φ15	գմ	4
2	Փականների և ջրի ծորակների ապամոնտաժոնմ	հատ	2
	Մոնտաժման աշխատանքներ	-	-
3	Պոլիպրոպիլենային խողովակի մոնտաժ PR PN-10, Φ20մմ	գմ	6
4	Լվացարանի ջրընդունիչ-ծորակ	հատ	1
5	Պոլիպրոպիլենե ֆիտիգներ	հատ	10
6	Ճկախողովակ Φ15մմ, L=500մմ	հատ	1
7	Փական d15	հատ	2
8	Միացում գործող ցանցին Φ32	տեղ	1
9	Ցանցի փորձարկում, լվացում և ախտահանում	մ	6
	Պահակակետ.		
	Կենցաղային կոյուղու ներքին ցանց		
	Ապամոնտաժման աշխատանքներ		
1	Զուգարանակոնքի ապամոնտաժում	հատ	1
2	Կոյուղու թուջե խողովակների ապամոնտաժում Ս100	գմ	3
3	Կոյուղու թուջե խողովակների ապամոնտաժում Ս50	գմ	3
4	Կերամիկական լվացարանի ապամոնտաժում սիֆոնով և ջրընդունիչ փականով	հատ	1
5	Բետոնե հատակների քանդում և վերականգնում	մ³	0,2
	Հողային աշխատանքներ	-	-
6	III կարգի գրունտի քանդում ձեռքով խրամուղում	մ³	0,9
7	Խրամուղու ետլիցք մշակված գրունտներից, տոփանումով	մ³	0,63
	Մոնտաժային աշխատանքներ	-	-
8	Պոլիվինիլքլորիդե կոյուղու խողովակների տեղադրում dy=110x3,2, SN-2, հողի մեջ հատակի տակ փորձարկումով	մ	3
9	Կոյուղու պոլիվինիլքլորիդային խողովակների մոնտաժ Φ110 պատերի վրա	գմ	4
10	Նույնը՝ Φ50	գմ	4
11	Կերամիկական լվացարանի տեղադրում սիֆոնով	հատ	1

12	Կերամիկական զուգարանակոնքի տեղադրում , «Կոմպակտե	հատ	1
13	Ձևավոր մասեր Φ110	հատ	8
14	Ձևավոր մասեր Φ50	հատ	4
15	Ստուգիչ -մաքրիչ Φ110	հատ	1
16	Միացում գործող ցանցին	տեղ	1
17	Միջհարկային ծածկի մեջ 150x150մմ անցքի բացում	տեղ	1
18	Հիմքերում անցքի բացում	հատ	1
19	անցքերի փակում	մ³	0,03
20	Ցանցի փորձարկում	գմ	11
	Ջրամատակարարման և կոյուղու արտաքին ցանցեր		
	Մոնտաժային աշխատանքներ		
1	Ասֆալտի ծածկույթի կտրում ֆրեզով	գմ	526
2	Ասֆալբետոնե ծածկույթի քանդում հանքահատ մուրճով	մ³	36
3	Խրամուղու մշակում էքսկավատորով 3-րդ կարգի գրունտներում կողլիցքով	մ³	50
4	Խրամուղու մշակում էքսկավատորով 4-րդ կարգի գրունտներում կողլիցքով	մ³	102
5	Խրամուղու մշակում էքսկավատորով 5-րդ կարգի գրունտներում կողլիցքով	մ³	70
6	3-րդ կարգի գրունտի քանդում ձեռքով խրամուղում	մ³	40
7	Ավազե նախապատրաստական շերտի իրականացում	մ³	24
8	Պոլիվինիլքլորիդե կոյուղու խողովակների մոնտաժում dy=110x3,2,	մ	32
9	Պոլիէթիլենային ծալքավոր կոյուղու խողովակների մոնտաժում dy=200, SN-4	մ	65
10	Պոլիէթիլենային ծալքավոր կոյուղու խողովակների մոնտաժում dy=300, SN-4	մ	198
11	Բետոնե առվակներ պատրաստում դիտահորում B15 դասի բետոնից	մ³	10
12	Ավազե պաշտպանիչ շերտի իրականացում	մ³	50
13	Միացում գործող ցանցին	տեղ	1
14	Դիտահորերի բետոնե հատակի և պատերի ամրացում B15 դասի բետոնով	մ³	9
15	Կոյուղու պոլիմեր-ավազային կլոր հավաքովի դիտահորերի պատրաստում բետոնե շերտի վրա D=900մմ, հմ=1,0մ	հատ	19
16	Պոլիմեր-ավազային մտոցի կափարիչ	հատ	20
17	Կոյուղու ցանցի փորձարկում	գմ	295
18	Խրամուղու ետլիցք մշակված գրունտներից, տոփանումով	մ³	256
19	Ավելցուկային գրունտի տեղափոխում 5կմ հեռավորության վրա	տ	209
20	Խճի շերտի իրականացում 12սմ հաստությամբ	մ²	270
21	Ասֆալտբետոնե ծածկույթի պատրաստում 4սմ հաստությամբ խոշորահատիկ	մ²	270

22	Ասֆալտբետոնե ծածկույթի պատրաստում 4սմ հաստությամբ մանրահատիկ	մ²	270
23	Գործող կոյուղու խողովակների փչամաքրում	գմ	50
	Ոռոգման ցանցի կառուցում		
1	Պոլիէթիլենային խողովակ PN-10 մթ.ճնշ. d=50x3,0 մմ, նախատեսված սառը ջրի համար	գմ	1 100
2	Պոլիէթիլենային ձգվող ´ x 50 մմ F	հատ	5
3	Պոլիէթիլենային ձգվող 1 1\2 ´´ x 50 մմ F	հատ	1
4	Պոլիէթիլենային ձգվող 50 x 50 մմ	հատ	6
5	Պոլիէթիլենային ձգվող 50 x 50 x50 մմ	հատ	6
6	Խամուտ անցում 3/4´´x 50 մմ	հատ	25
7	Միացման մասեր	հատ	25
8	Փական գնդաձև 3/4 ´´	հատ	25
9	Ռետինե խողովակ 3/4 ´´	մ	200

<u>Հավելված 3</u>

«Հրազդան» քրեակատարողական հիմնարկի արտաքին կոյուղագծի վերանորոգում

NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը
1	2	3	4
	<u>Ապամոնտաժման աշխատանքներ</u>		
1	Շենքի արտաթողման խողովակների ապամոնտաժում Φ 110-150,	գմ	20
	<u>Քանդման և մոնտաժման աշխատանքներ</u>		
1	Ասֆալտի ծածկույթի կտրում ֆրեզով	գմ	194,0
2	Ասֆալբետոնե ծածկույթի քանդում հանքահատ մուրճով	մ³	25,0
3	Խրամուղու մշակում էքսկավատորով, լայնացումով դիտահորերի համար 3-րդ կարգի գրունտներում կողլիցքով	մ³	100,00
4	Խրամուղու մշակում էքսկավատորով , լայնացումով դիտահորերի համար 5-րդ կարգի գրունտներում կողլիցքով	մ³	40,00
5	3-րդ կարգի գրունտի քանդում ձեռքով խրամուղում	մ³	29
6	Ավազե նախապատրաստական շերտի իրականացում	մ³	8
7	Պոլիվինիլքլորիդե կոյուղու ծալքավոր խողովակների մոնտաժում dy=300,	մ	96
8	Պողպատյա եռակցված խողովակների մոնտաժում dy=325x6մմ, փորձարկումով	մ	6

9	Շենքի արտաթողումների մոնտաժ պոլիվինիլքլորիդե խաղավակից Φ200մմ դրամագծով	մ	22
10	Բետոնե առվակներ պատրաստում դիտահորում B15 դասի բետոնից	մ³	1,8
11	Հավաքովի ե/բ էլեմենտներից /հատակ,պատեր, ծածկ/ դիտահոր D=1000մմ (8,2մ3/530,6կգ)	մ³	7,6
12	Հորերի մետաղական էլեմենտներ	կգ	180
13	Մետաղական աստիճան 6 հատ	կգ	90
14	Թուջե մտոց Φ700	հատ	6
15	Պարսպապատի հիմքում անցքի բացում 500x500	տեղ	1
16	Պողպատե խողովակ պատյանի տեղադրում Φ500	մ	1
17	Հենարանների տակ բետոնե բարձիկի իրականացում 0,5x0,5x0,5	մ³	0,125
18	Պողպատյա խաղավակների ձևավոր մասեր	կգ	80
19	Միացում գործող դիտահորին	տեղ	1
20	Ցանցի փորձարկում	զմ	124
21	Հին կոյուղու խողովակի անջատում միացման հորից	տեղ	1
22	Հորի անցքի խցափակում B15 դասի բետոնով	մ³	0,05
23	Պողպատե էլ.եռակցված խողովակի գերուժեղացված հակակոռոզիոն մեկուսացում	զմ	6,2
24	Պողպատյա վերգետնյա խողովակների ջերմամեկուսացում ֆոլգայապատ հանքային բամբակով 10սմ հաստությամբ	մ³	1
25	Ավազե պաշտպանիչ շերտի իրականացում	մ³	17
26	Ճարպորսիչ խոհանոցի խոհանոցակոնքի տակ տեղադրվող ՊԷ-0,5-50 Стандарт	հատ	4
27	Խրամուղու ետլիցք մշակված գրունտներից, տոփանումով	մ³	124
28	Ավելցուկային գրունտի տեղափոխում 5կմ հեռավորության վրա	տ	86
29	Ա/բ ծածկի տակ խճի նախապատրաստական շերտի իրականացում 17սմ հաստությամբ	մ²	135
30	Ա/բ խոշորահատիկ ծածկույթի իրականացում h=4սմ	մ²	135
31	Ա/բ մանրահատիկ ծածկույթի իրականացում h=4սմ-	մ²	135
32	Մետաղական էլեմենտների յուղաներկում 2 շերտ	մ²	6

**ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011029148
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայություն՝
Ա.Ղազարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Սուֆետ» ՍՊԸ
ՀՀ Տավուշի մարզ, գ. Ջուջևան,
3 փող., 4. նրբ, 4 տուն
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 15700149984501 00
ՀՎՀՀ 07404587

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
«24» «10» 2019թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿՇ-ԳՀՇՁԲ-19/12-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգմանը (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71351540/1	ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ արտաքին և ներքին ջրահեռացման ցանցերի վերակառուցման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ	-	-	-	-	-	-	-	-	-	207000	207000	207000	207000
3	71351540/3	ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿՀ ներքին ջրամատակարարման, արտաքին և ներքին ջրահեռացման համակարգերի ցանցերի վերանորոգում, սանհանգույցների և բաղնքի, վերանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ	-	-	-	-	-	-	-	-	-	291000	291000	291000	291000
4	71351540/4	ՀՀ ԱՆ «Հրազդան» ՔԿՀ արտաքին կոյուղագծի վերանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ	-	-	-	-	-	-	-	-	-	153000	153000	153000	153000
															651000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011029148
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայություն՝
Ա.Ղազարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Սուֆետ» ՍՊԸ
ՀՀ Տավուշի մարզ, գ. Ջուջևան,
3 փող., 4. նրբ, 4 տուն
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570014998450100
ՀՎՀՀ 07404587

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 3
«21» «10» 2019 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-19/12-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
«24» «10» 2019 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-19/12-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն